Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով օդորակիչների և փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.03.2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կ. Բարսեղյան
	Գ. Խաչատրյան
	Մ. Արշալույսյան
	Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Նիկոլայան

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Արամ Խաչատրյան Սասունի Ա/Ձ

Հավելված N1-ի մասով՝

1)-ին կետի պարբերությունը չի համապատասխանում հրավերի օրինակելի ձևին:

Ապրանքի ամբողջական նկարագրի մասով՝

Առաջարկվող ապրանքի մակնիշը և տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում, մասնավորապես՝ սառեցման և տաքացման հզորությունները:

Մայ Մարկետ ՍՊԸ

Ապրանքի ամբողջական նկարագրի մասով՝

Տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրված (մասնավորապես՝ առնվազն, պետք է, բառերը և հրավերի բնութագրում նշված պարտադիր պայմանները անհրաժեշտ է հստակեցնել):

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել **Արամ Խաչատրյան Սասունի Ա/Ձ-ին և Մայ Մարկետ ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 12.03.2024թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 13.03.2024թ. ժամը 15:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Կ. Բարսեղյան

---------- Գ. Խաչատրյան

---------- Մ. Արշալույսյան

---------- Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան